ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2014 թվականի թիվ 104 - Ա

ԱՆԺԵԼԱ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի <Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին> N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի <դ> ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2014 թվականի օգոստոսի 8-ի N 07/4586-14 գրությունը՝

Որոշում եմ.

1.ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի /ծածկագիր՝ 70-3.1-12/ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Անժելա Հուսիկի Սիմոնյանի հետ 2014թ. օգոստոսի 13-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթի արդյունքով թափուր պաշտոնը զբաղեցնելը:

2.«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխան սահմանել դրույքաչափ՝ առաջատար պաշտոնների 1-ին ենթախմբի սանդղակի 1-ին մակարդակի գործակցի (2.66) կիրառմամբ՝ 175932 / հարյուր յոթանասունհինգ հազար ինն հարյուր երեսուներկու / դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2014թ. օգոստոսի 13
ք.Իջևան